Հավելված N
ՀՀ կառավարության 2019 թ.
-ի նիստի N
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՅՈՑ ՁՈՐ - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	3
	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1	ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	5
2	2.1 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	6
	2.2 ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	7
3	ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	9
4	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	10
5.	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	13
6	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	14
	6.1. Կրթություն	14
	6.2. Մշակույթ, սպորտ, երիտասարդություն	15
	6.3. Առողջապահություն	16
	6.4 Սոցիալական պաշտպանություն	19
7.	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	20
	7.1 Ճանապարհաշինություն	20
	7.2 Ջրամատակարարում և ջրահեռացում	22
	8.3 Գազամատակարարում	24
8.	Քաղաքաշինություն	25
9.	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	28
	9.1. Տարածքային կառավարում	28
	9.2. Տեղական ինքնակառավարում	29
	9.3. Քաղաքացիական հասարակություն	32
10.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	34
11.	ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	35

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԶՌ - մարզային զարգացման ռազմավարություն

ԿԶԾ - Կայուն զարգացման ծրագիր

ՄԶԾ - մարզի զարգացման ծրագիր

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՎԾ - Ազգային վիճակագրական ծառայություն

ՏԻՄ - տեղական ինքնակառավարման մարմին

ՀԿ - հասարակական կազմակերպություն

ՊՓԲԸ - պետական փակ բաժնետիրական ընկերություն

ՓԲԸ - փակ բաժնետիրական ընկերություն

ՊՈԱԿ - պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՓՄՁ - փոքր և միջին ձեռնարկատիրություն

ՓՄՁ ԶՄԽ - փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մարզային խորհուրդ

ՀԱԷԿ - Հայկական ատոմային էլեկտրակայան

ՏԱՊ - տարեկան աշխատանքային պլան

ՄԳ - մոնիտորինգ և գնահատում

ՄԻԱՎ/ՁԻԱՎ - մարդու իմունային անբավարարության վիրուս /ձեռքբերովի իմունային անբավարարության հիվանդություն

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 29 որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը: Տարեկան աշխատանքային պլանի նպատակն է ապահովել տվյալ տարվա համար ՄԶՌ-ով նախատեսված միջոցառումների իրականացումը: ՏԱՊ-ն ամփոփում է պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները:

Սույն տարեկան աշխատանքային պլանը կազմված է 2019 թվականի համար՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հաստատված պետական բյուջեի և նախատեսված միջոցառումների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային և այլ կազմակերպությունների կողմից Վայոց ձոր մարզում 2019 թվականին

նախատեսվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ մարզպետարանին տրամադրված տեղեկատվությունը:

ՏԱՊ-ի նպատակներն են.

1) Հնարավոր բոլոր ռեսուրսների համախմբումը ՄԶՌ-ով նախատեսվող 2019 թվականին իրականացվելիք միջոցառումների իրականացման համար
2) Նախատեսվող միջոցառումների շաղկապումը ՄԶՌ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ
3) Միջոցառումների իրականացման ցուցանիշների և արդյունքների ներառումը տրամաբանական հենքում
4) Հնարավորության դեպքում միջոցառումների իրականացման ժամկետների՝ ըստ եռամսյակների և դրանց իրականացման համար պատասխանատու կազմակերպությունների սահմանումը
5) Դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունների սահմանումը:

Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց՝ 2018 թվականի ընթացքում իրականացման համար պատասխանատու է լինելու մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են Ծրագրի իրականացման մոնիտորինգի աշխատանքները: Բոլոր նախատեսվող միջոցառումները մանրամասնեցված են Հավելվածում արձանագրված <<Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքում>>:

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2019 թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում

1) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
3) Արդյունաբերության զարգացում
4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
5) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
6) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
7) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
8) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
9) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
10) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
11) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
12) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
13) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում

14) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

1. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ

ՄԶՌ-ում բավարար կերպով տրված է աղքատության գնահատումը Վայոց ձորի մարզում և նախանշված են դրա հաղթահարմանն ուղղված միջոցառումները:

2019 թվականին նույնպես բնակչության բարեկեցության աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը կմնան որպես ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրներ:

ՄԶՌ-ով նախատեսված քաղաքականությունների փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է մարզի մասշտաբով նախանշված գերակա ուղղություններ, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային կառավարման բարեփոխումներին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին, հանրության մասնակցության ու մոնիտորինգի մեխանիզմների ներդրմանը: ՄԶՌ-ը, հիմք ընդունելով ԿԶԾՌ-ի սկզբունքներն ու ռազմավարությունը, նպատակ է հետապնդում բացահայտել մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները: 2018 թվականին աղքատության խնդիրները Վայոց ձորի մարզում կշարունակեն որոշակի լուծումներ ստանալ:

ՀՀ Վայոց ձոր մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա 2019 թվականի համար նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի եկամտային և մարդկային աղքատության հաղթահարմանը.

1) ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացում
2) Սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում
3) Արդյունաբերության և էներգետիկայի զարգացում
4) Գյուղատնտեսության զարգացում
5) Բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում
6) Զբոսաշրջության զարգացում
7) Քաղաքաշինական ծրագրերի իրականացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների կառուցում, բարելավում
9) Տարածքային կառավարման և տեղական ինքակառավարման արդյունավետ մեխանիզմների կիրառում
10) Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների արդյունավետ պաշտպանություն:

2.1 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզում առկա է 18 արտադրական ձեռնարկություններ, որոնք սեփականաշնորհվել են և մինչև այժմ չեն օգտագործվել: 2018 թվականին նախատեսվում է վերապրոֆիլավորման միջոցով օտագործել 2 արտադրական շինություն: Մասնավորի կողմից ընդհանուր առմամբ կներդրվի մոտ 64 000 հազ դրամ և կստեղծվի 20-25 նոր աշխատատեղ:

Հ/հ	Անվանում	Ոլորտը	Գրանցման հասցե	Նախատեսվող գործունեությունը
1	«Տարոն» ԲԲԸ	կարի արտադրամաս	Եղեգնաձոր, Միկոյան փ	Առևտրի կետ
2	«Վարդանանք-1» ԲԲԸ	կարի արտադրամաս	Եղեգնաձոր ավան	Հասարակական սնունդ

Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով Եղեգնաձոր քաղաքում կկառուցվի արևային էլեկտրակայան, կներդրվի 500 000 հազ դրամ

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

արդյունաբերության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	**2019թ նախատեսված իրատեսական բյուջե հազ դրամ**
արդյունաբերության հատված	**1414**
ՀՀ պետական բյուջե	
որից՝ սեփական միջոցներ	
Վարկային միջոցներ	
դոնորներ	500 000
Համայնքային բյուջե	
Մասնավոր ներդրողներ	914000

2.2 <u>ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</u>

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2018 թ. առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը, 1) ՓՁՄ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում, 2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսման համար: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպիսի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում: 2019թ նախատեսվել է 80 000 հազ դրամ փոքր և միջին ձեռնարկատիրության սյուբեկտների վարկավորման հետ կապված հիմնախնդիրների ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովման համար, այս ներդրումը նախատեսվում է իրականացնել նաև ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցներով

Մասնավորի միջոցներով Եղեգնաձոր քաղաքում կնդլայնվի առևտրի սրահը՝ 27 000 հազ դրամ

ՓՄՁ և մասնավոր հատվածի 2019թ. գործունեության ծրագիր

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2019թ նախատեսված իրատեսական բյուջե հազ դրամ
ՓՄՁ և մասնավոր հատվածի	**107000**
ՀՀ պետական բյուջե	80 000
որից՝ սեփական միջոցներ	80 000
Վարկային միջոցներ	
դոնորներ	
Համայնքային բյուջե	
Մասնավոր ներդրողներ	27000

3 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Մարզի զբոսաշրջության ոլորտի էկոտուրիզմի և գինու տուրիզմի 4 նոր երթուղիների վերաբերյալ ներդրումային փաթեթների պատրաստում Զբոսաշրջության պետական կոմիտեի միջոցների հաշվին:

1. Թուֆենկյան հյուրանոցային համալիրի կառուցում Արենի համայնքում, կներդրվի 1000000 հազ դրամ
2. Եվրոմիության դրամաշնորհային միջոցներով 13 հյուրատների վերանորոգում, կներդրվի 16650 հազ դրամ
3. 3 Չիվա –Ռինդ սահմանահատվածում համալիրի կառուցում (Տերտերյան Տրադե) 730000 հազ դրամ

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

Զբոսաշրջության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2019թ նախատեսված իրատեսական բյուջե հազ դրամ

Զբոսաշրջություն	***2646650.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	16650.0
սեփական միջոցներ	*0.0*
վարկային միջոցներ	*16650.0*
Համայնքային բյուջե	0.0
Մասնավոր ներդրողներ	2630000.0

4 .ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որտեղից միջին հաշվով տարեկան արտադրվում է 21-22 միլիարդ դրամի համախառն արտադրանք:
Գյուղատնտեսական նշանակության հողերն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով, նախատեսվում է 2019 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ցանքատարածություններն ավելացնել շուրջ 700 հեկտարով:
Չնայած մարզի հողային ռեսուրսները հնարավորություն չեն տալիս ավելի մասիվ տարածությունների վրա ինտենսիվ այգիներ հիմնելուն, անգամ այս պայմաններում նախատեսվում է 2019 թվականին հիմնել 10 հա պտղատու և 15 հա խաղողի ինտենսիվ այգիներ: 45 հա պտղատու և 25 հա խաղողի այգիների ոռոգումը նախատեսվում է իրականացնել կաթիլային եղանակով, ինչպես նաև 3 հա պտղի և 4 հա խաղողի այգիներում տեղադրել կարկտապաշտպան ցանցեր:
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի 60-65 տոկոսը ստացվում է անասնապահությունից: Տարեկան արտադրվում է 20-22 հազ. տոննա կաթ, 6000-6300 տոննա միս և այլ մթերքներ:
Մարզում գործում են կաթի վերամշակման 5, խաղողի վերամշակման 11,պտուղ-բանջարեղենի վերամշակման 1 ձեռնարկություն:
2017 թվականի օգոստոսից մասնավոր ներդրողների միջոցով շահագործման հանձնվեց Զառիթափի սպանդանոցը, որտեղ մեկ հերթափոխում կարող է մորթվել 25 գլուխ խոշոր, 650 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Ստեղծվել է 10 աշխատատեղ: Սպանդանոցը կանոնավոր կգործի ինչպես 2019 թվականին, այնպես էլ հետագա տարիներին:
Մարզում գործում են 24 սառնարանային տնտեսություններ 1000 տոննա տարողությամբ:
Մարզում գործում են 146 ֆերմերային տնտեսություններ: Աշխատանքներ են տարվում 2019 թվականին ֆերմերային տնտեսությունների թիվն ավելացնելու ուղղությամբ: Չնայած մարզում տոհմային տնտեսություն ստեղծելու հնարավորություն առայժմ չկա, բայց զգալի աշխատանքներ են տարվում կենդանիների տոհմային կազմի բարելավման ուղղությամբ:
<<ՌԶԳ>> ՀԿ-ի միջոցով 2018 թվականին 980 գլուխ կովեր ենթարկվել են արհեստական սերմնավորման, նպատակ ունենալով ավելացնել Շվից, Հոլշտեյն, Սիմենթալ և կովկասյան գորշ ցեղի կենդանիների գլխաքանակը: 2019 թվականին նախատեսվում է սերմնավորել 1700 գլուխ կովեր:
<<Արիդ>> այծաբուծական սպառողական կոոպերատիվը իրականացնում է այծերի ցեղի բարելավման աշխատանքներ՝ միջցեղային տրամախաչման արդյունքում ստանում են բարելավված խառնածիններ, որոնք վաճառում են գյուղացիական տնտեսություններին:
Գյուղատնտեսական արտադրությունը խթանելու նպատակով, կազմվել ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել այծաբուծության զարգացման, ջերմոցային տնտեսությունների ստեղծման, թռչնաբուծության զարգացման, չրերի

արտադրություն կազմակերպելու ներդրումային ծրագրեր, դրանցից երկուսը՝ չրերի արտադրության և այծի կաթից պանրի արտադրության ծրագրերն արդեն ֆինանսավորվել են:
Մարզի գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է ոռոգելի հողատարածությունների ավելացմամբ: Այսօր մարզի վարելահողերի ընդամենը 17 տոկոսն է ոռոգելի: 2019 թվականին Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում կառուցվող ոռոգման ջրատարով ոռոգելի հողատարածությունը կավելանա 20 հեկտարով: Համայնքներում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ եթե կառուցվի 56.2 կմ ոռոգման ջրագիծ և 11 կմ ներքին ցանց, ապա ոռոգելի հողատարածությունները կավելանա 1131.5 հեկտարով:
ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ղեկավարության հետ քննարկվել է մարզի չորս /Ելփին, Խաչիկ, Վերնաշեն,/ փոքր ջրամբարների կառուցման հնարավորությունները, տրվել տնտեսական և ֆինանսական գնահատականներ, որի արդյունքում վերոհիշյալ համայնքներում ոռոգելի հողատարածությունները կավելանա շուրջ 1500 հա-ով:
2018 թվականին ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում Թառաթումբ համայնքի շահառուների կողմից ձեռք է բերվել մեկ միավոր գյուղատնտեսական տեխնիկա /Բելառուս/ կցվող գործիքներով:
Աշխատանքներ են տարվում 2019 թվականին շահառուների թիվն ավելացնելու ուղղությամբ:

1	Զառիթափ համայնքի Բարձրունի բնակավայրի ինքնահոս ջրագծի կառուցում	140,000.0
3	Եղեգիս համայնքի Աղնջաձոր, Շատին, Հերմոն գյուղերի ոռոգում	65,000.0
4	Եղեգիս համայնքում գյուղտեխնիկայի ձեռքբերում	78,000.0
5	Եղեգիս համայքնում գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի իրականացում	61,200.0
6	,, Զառիթափի բարեկարգում ,, ՀՈԱԿ-ի կողմից գյուղատնտեսական աշխատանքների, տրանսպորտային փոխադրումների կազմակերպման,ճանապարհների սպասարկման և բարեկարգման աշխատանքների իրականացում	27,000.0
7	Գլաձոր համայնքի գյուղատնտեսության զարգացման խթանում	2,800.0
8	Վայոց ձորի մարզում բույսերի պաշտպանության միջոցառումներ	9,400.0
9	Բարձրունու պոմպակայանի ինքնահոս համակարգի կառուցում	90,178.0
	Ընդամենը	**473,578.0**

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

գյուղատնտեսության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Գյուղատնտեսություն	***2223578.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	99578.0
սեփական միջոցներ	*99578.0*
վարկային միջոցներ	*0.0*
Համայնքային բյուջե	234000.0
Մասնավոր ներդրողներ	1750000.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	140000.0

Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ ներդրումներ կատարելու համար:

5 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարզային բնապահպանական հիմնախնդիրները եղել են և մնում են ՀՀ Կառավարության ուշադրության կենտրոնում: 2003թ.-ին մշակված ՀՀ ԿԶԾ-ում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության ու կառավարման խնդիրները կարևորվել են որպես աղքատության նվազեցման քաղաքականության իրականացման երաշխիք մարզում ծրագրի իրականացման քաղաքականության գերակայություն են համարվում .

Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ ներդրումներ կատարելու համար:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

6.1 Կրթություն

Կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2019թ. հատկապես ուշադրություն է դարձվելու կրթության որակի, դասավանդման և դպրոցների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը: Անհրաժեշտ է նաև հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ իրականացնել:

2019թ. առաջարկվում է շարունակել դպրոցների տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական

կարողությունների բարձրացման, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների, ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման, մարզում մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված ծրագրերը:

Այդ նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Փոքրաթիվ աշակերտներ ունեցող դպրոցների աշակերտների ընդգրկում մոտակա բնակավայրի համեմատաբար շատ աշակերտներ ունեցող դպրոցի աշակերտական համակազմում, նրանց կրթությունը կազմակերպելով տեղի դպրոցական շենքում:
2. Դպրոցներում ժամանակակից սմարթ-դասարանների ստեղծում:
3. Հեռավար տեսադասերի անցկացում ապահովելով տեսակապ աշակերտների և դասը վարողների միջև:
4. Ուսումնական ծրագրերով հագեցված գրասալիկներով (պլանշետներով) աշակերտների ապահովում առանց ինտերնետ կապի:
5. Գրասալիկներով աշխատելու համար մեթոդական ուղեցույցի մշակում և տրամադրում ուսուցիչներին:
6. Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի դպրոցները կադրերով ապահովելու նպատակով տեղացի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներին հնարավորություն տալ վերապատրաստման միջոցով համալրելու մանկավարժների թափուր տեղերը:
7. Շարունակել ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

կրթության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Կրթություն	***1809467.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	1784467.0
սեփական միջոցներ	*17844670.0*
վարկային միջոցներ	*0.0*
Համայնքային բյուջե	25000.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

6.2 Մշակույթ, սպորտ, երիտասարդություն

2019 թվականին մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառում մարզպետարանի գործունեությունը կնպատակաուղղվի մարզում մշակութայինպետական քաղաքականության իրականացմանը, մարզի մշակութային դերի բարձրացմանը, մշակութային ու հոգևոր ժառանգության պահպանմանը, ազգային արժեքների ու ավանդույթների վերականգմանն ու տարածմանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, թանգարանների, գրադարանների, մշակութային այլ օջախների նպատակային գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանն ու առաջընթացին,<<Առողջ մարմնում՝ առողջ հոգի>> կարգախոսով ապրելակերպի ամրապնդմանն ուղղված բազմաբնույթ սպորտային միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը,հասարակության ազատ ժամանցի կազմակերպումը, հայ ընտանիքի բարոյական նորմերի պահպանմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը, երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Մարզում գործում է 2 պատկերասրահ, 3 թանգարան, 42 գրադարան, 6 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 2 մշակութային կենտրոն, 38 մշակույթի տուն և ակումբ, 6 երիտասարդական կենտրոններ, 4 մարզադպրոց և այլ մարզական կառույցներ ու մշակութային օջախներ, որոնց միջոցով նախատեսվում է կազմակերպել և անցկացնել փառատոններ, մշակութային միջոցառումները, հոբելյանները, ցուցահանդեսներ, գիտաժողովներ, գրքի շնորհանդեսներ:

2019թ. ՀՀ Վայոցի մարզի համայնքներում մեծ շուքով կնշվի Մայիսյան հերոսամարտերը, կկազմակերպվեն տարաբնույթ միջոցառումեր, համերգային ծրագրեր, ուխտագնացություններ:

Տարվա ընթացքում մարզի համայնքներում կկազմակերպվեն և կիրականացվեն ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հոբելյաններ, տարելիցներ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ:

Մարզում գործող 6 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում կշարունակվեն երեխաների գեղարվեստական կրթության բարձրացման ուղղությամբ արդյունավետ աշխատանքներ, ինչպես նաև՝ երաժշտական գործիքներով համալրման աշխատանքներ:

Ակնկալվում է նաև դոնոր կազմակերպությունների մասնակցությունը միջոցառումների, համերգային ծրագրերի կազմակերպման և իրականացման գործում:

Անհրաժեշտ աշխատանքներ կիրականացվեն մարզի մշակութային և սպորտային, պատմամշակութային հուշարձանների պահպանության, մշակութային կրթական հաստատությունների աշխատանքներիկազմակերպման, մշակութային և մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման ուղղությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

Մշակույթ, սպորտ, երիտասարդության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Մշակույթ և սպորտ	***209391.0***

որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	24891.0
սեփական միջոցներ	*24891.0*
վարկային միջոցներ	*0.0*
Համայնքային բյուջե	64500.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	120000.0

Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ ներդրումներ կատարելու համար:

6.3 Առողջապահություն

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես գերակա նպատակ:

- ՄԶՌ-ում արտացոլված առողջապահության ոլորտի գերակայությունները ներառում են՝ հեռավոր գյուղական համայնքներում առողջության պահպանման առաջնային ծառայությունների բարելավում և մատչելիության բարձրացում, նեղ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի և ղեկավար բուժանձնակազմի վերապատրաստում, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ ախտորոշման և լիարժեք բուժման ազգային ռազմավարության մասին հանրային իրազեկության բարձրացում, բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում: Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց հիմնականում կախված է դոնոր կազմակերպությունների միջոցների և Կառավարության շարունակական օժանդակության առկայությունից:

- Աշխատանքներ են իրականացվել առողջապահական կազմակերպությունների կողմից վճարովի ծառայությունների ծավալների մեծացման ուղղությամբ՝ ինչը դրական անդրադարձ է ունեցել կազմակերպությունների հասույթի ձևավորման վրա:
- Մարզի բժշկական բոլոր կազմակերպությունները միացել են առողջապահական միասնական էլեկտրոնային համակարգին:

- ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջոցներով իրականացվել է <<Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցումը, որի համար ներդրվել է շուրջ 65 մլն. դրամ :
- ՀՀ Կառավարության որոշմամբ <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ում գործում է հեմոդիալիզի բաժանմունք, որի համար առողջապահության նախարարության կողմից վերապատրասվել են բժիշկներ և բուժքույրեր, տեղադրվել է դիալիզի ժամանակակից 3 նոր սարքավորումներ, ներդրվել է շուրջ 37 մլն. դրամ:
- 2019թ. կշարունակվեն առողջապահական հիմնարկների համալրումը բուժ. սարքավորումներով և գույքով պետ. բյուջեի միջոցների և օրենքով չարգելված այլ հնարավոր ներդրումների հաշվին: Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է.
- Պոլիկլինիկական ծառայությունները կշարունակեն տեղակայվել ներկայիս վայրերում:
- Հետևողական աշխատանքներ են տարվելու առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեում վճարովի ծառայությունների տեսակարար կշռի ավելացման ուղղությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

առողջապահության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Առողջապահություն	***1117465.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	1117465.0
սեփական միջոցներ	*767465.0*
վարկային միջոցներ	*350000.0*
Համայնքային բյուջե	0.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ ներդրումներ կատարելու համար:

6.4 **Սոցիալական պաշտպանություն**

2019թ. ՄԶՌ առաջարկվում է ընդլայնել բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, շարունակաբար բարձրացնել սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետությունը, ներդնել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը,որը նշանակում է նոր որակի ծառայությունների տրամադրում, հաճախորդի սոցիալական վիճակի վրա ներազդելու սկզբունքորեն նոր մեթոդների և մեխանիզմների կիրառում: Իրականացվել է սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի վերապատրաստում,որը ի վերջո կբերի սոցիալական աշխատանքի (սոցիալական աշխատողի) ինստիտուտի կայացմանը: Անհրաժեշտ է բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ, բարելավել սոցիալական ծառայությունների կառավարումը, նյութատեխնիկական բազան և այլն:

-2019թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար կստեղծվեն 3 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ /տրամադրվել են համապատասխան տարածքներ/ :

- 2019թվականին նախատեսել է Վայք և Եղեգնաձոր համայնքներում տարեցներին տնային պայմաններում շուրջօրյա խնամքի ծառայության կազմակերպում: Փորձնական ծրագրից կօգտվի առնվազն 12 տարեց:/Համայնքապետարանները տվել են իրենց համաձայնությունը/

Անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել երեխաների և ծերերի, հաշմանդամների և գործազուրկների պաշտպանվածությունը, համայնքների հասարակական վայրերում, մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակներ կառուցել, զոհված և վիրավոր զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները բարելավել: Ակտիվ համագործակցել սոցիալական ծրագրեր իրականացնող ՀԿ- ների հետ:

-

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

սոցիալական ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Սոցիալական պաշտպանություն	***5464679.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	5464679.0
սեփական միջոցներ	*5464679.0*

վարկային միջոցներ	*0.0*
Համայնքային բյուջե	0.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

7.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

7.1 Ճանապարհաշինություն

2019 թվականին մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

1	Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ126.1 - կմ131.5 հատվածի հիմնանորոգում /5.4կմ/	540,000.0	պետ բյուջե
2	Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139.0 - կմ142.0 հատվածի հիմնանորոգում /3.0կմ/	300,000.0	պետ բյուջե
3	2019թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական, հանրապետական և մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացում	445,100.0	պետ բյուջե
4	Մ2 – Գետափ 2.2 կմ	346,000.0	պետ բյուջե , վարկային
5	S – 9 – 21 /Շատին/ - Հորբատեղ 6 կմ	804,000.0	պետ բյուջե , վարկային
7	Մ2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ-Եղեգնաձոր հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում Արենի գյուղի մեջ Արփա գետի վրա կառուցված կամրջի վերանորոգում	50,000.0	պետ բյուջե
9	Եղեգնաձոր համայնքի ճանապարհների պահպանում և շահագործում	14,500.0	Համայնքային բյուջե

10	Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի ճանապարհների պահպանում և շահագործում	11,000.0	Համայնքային բյուջե
11	Արենի համայնքի կենտրոնական փողոցների հիմնանորոգում	15,000.0	Համայնքային բյուջե
Ընդամենը		**2,525,600.0**	

- **ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման**

Ճանապարհաշինության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Ճանապարհաշինություն	***2525600.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	2485100.0
սեփական միջոցներ	*1335100.0*
վարկային միջոցներ	*1150000.0*
Համայնքային բյուջե	40500.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ ներդրումներ կատարելու համար:

7.2 Ջրամատակարարում և ջրահեռացում

Այս ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին,որը ուղակիորեն կնպաստի աղքատության նվազմանը մարզում:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Գյուղական համայնքներում խմելու ջրի արտաքին ցանցերը 90% հիմնանորոգված են, իսկ ներքին ցանցերը հիմնականում գտնվում են ֆիզիկապես մաշված վիճակում, որը պատճառ է դառնում ջրի կորստի և որակական հատկանիշների վատթարացմանը :

Հրատապ խնդիր է 2 քաղաքներում (Եղեգնաձոր, Վայք) կոյուղու մաքրման կայանների (կոլեկտորի) կառուցումը :

1	Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի խմելու ջրագծի արտաքին ցանցի կառուցում մետաղյա խողովակով	8,640.0	պետ բյուջե , վարկային
3	Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում	11,520.0	պետ բյուջե , վարկային
4	Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի ներքին խմելու ցանցի վերանորոգում	19,200.0	պետ բյուջե , վարկային
6	Արենի համայնքի Չիվա բնակավայրի խմելու արտաքին ցանցի հիմնանորոգում/2կմ/	28,800.0	պետ բյուջե , վարկային
5	Արենի համայնքի Արենի, Ռինդ, Չիվա, Աղավնաձոր բնակավայրերի կոյուղագծերի կառուցում	12,000.0	Համայնքային բյուջե
6	Զառիթափ համայնքի Բարձրունի և Սերս բնակավայրերում խմելու ջրի ցանցերի կապիտալ վերանորոգման աշխատանքերի իրականացում	58,000.0	Համայնքային բյուջե
	Եղեգիս համայնքի Թառաթումբ,Աղնջաձոր, Հորս բնակավայրերի խմելու ջրագծի անցկացում	25,000.0	Համայնքային բյուջե
	Ընդամենը	**163,160.0**	

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

Ջրամատակարարում և ջրահեռացում ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Ջրամատակարարում և ջրահեռացում	***163160.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	68160.0
սեփական միջոցներ	*0.0*
վարկային միջոցներ	*68160.0*
Համայնքային բյուջե	95000.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

Աշխատանքներ է տարվում պետական կազմակերպությունների, ներդրողների, ինչպես նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ ներդրումներ կատարելու համար:

7.3 Գազամատակարարում

2018 թվականի ընթացքում <ՀայՌուսԳազարդ> -ի կողմից գազիֆիկացվել է 167 բնակարաններ, որից 24-ը բազմաբնակարան, 143- առանձնատուն: Մարզում գազիֆիկացված է 7895 տնտեսություն, որից 4259-ը բազմաբնակարան, 3636- առանձնատուն

Բնական գազ է մատակարարվում մարզի 3 քաղաքային և 11 գյուղական համայնքներում:

Գործող Իրան-Հայաստան գազամուղը հնարավորություն է ընձեռնում հետագայում կատարել ուղեգծին հարակից մարզի համայնքների գազիֆիկացման աշխատանքների կատարմանը:

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ			
1	Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրում գազատարի ներքն ցանցի կառուցման աշխատանքներ	36,000.0	Համայնքայ ին բյուջե

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

Գազամատակարարման ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Գազաֆիկացում	***36000.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	0.0
սեփական միջոցներ	*0.0*
վարկային միջոցներ	*0.0*
Համայնքային բյուջե	36000.0
Մասնավոր ներդրողներ	0.0

8 *ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ*

1	Արատես վանական համալիրի ամրակայում, մասնակի վերականգնում և տարածքի բարեկարգում	12,000.0	պետ բյուջե
3	Պաշտպանության նախարարության համար բազմաբնակարան շենքի կառուցման շարունակությունՎայք քաղաքում	40,000.0	պետ բյուջե
4	Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի դպրոցի շենքի տանիքի վերանորոգում	10,000.0	պետ բյուջե
5	Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մանկապարտեզի շենքի տանիքի մասնակի նորոգում 3.0 մլն դրամ, ջեռուցման համակարգի կառուցում 7.0 մլն դրամ	10,000.0	պետ բյուջե

6	Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում առանց տանիքի	24,700.0	պետ բյուջե
7	Ջերմուկ համայնքումձախափնյա թաղամասի բնակելի շենքների շքամուտքերի վերանորոգում	113,499.0	պետ բյուջե , վարկային
8	Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման աշխատանքներ	12,900.0	պետ բյուջե , վարկային
9	Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում տանիքով	33,850.0	պետ բյուջե
7	Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն գյուղական բնակավայրում արտաքին լուսավորությանցանցիկառուցում	25,000.0	Համայնքային բյուջե
10	Ջերմուկ, Գնդեվազ, Հերհեր, Կարմրաշեն և Կեչուտ բնակավայրերի գերեզմանատների պարսպապատում	6,834.0	Համայնքային բյուջե
11	Ջերմուկի քաղաքային ճոպանուղու գլխավոր ճոպանի հիմնանորոգում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր	18,000.0	Համայնքային բյուջե
12	«Խելացի կանգառներ»-ի կառուցում՝ ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր	10,000.0	Համայնքային բյուջե
13	Ջերմուկի համայնքապետարանի մասնաշենքի 2-րդ հարկի, Կեչուտ, Գնդեվազ, Հերհեր և Կարմրաշեն բնակավայրերի գրասենյակների հիմնանորոգում և կահավորում	26,775.0	Համայնքային բյուջ
14	Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգում	266.559.0	պետ բյուջե , վարկային
15	Ջերմուկի ըմպելասրահի հիմնանորոգում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթեր	14,395.0	Համայնքային բյուջե
16	Ջերմուկ բնակավայրի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ձմեռայինայգու, Կեչուտ բնակավայրի մասնաշենքի 2-րդ հարկի, «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տանիքի հիմանորոգում	37,500.0	Համայնքային բյուջե
17	«Ջերմուկի համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի մարզասրահի կառուցում	44,478.0	Համայնքային բյուջե
18	Արենի համայնքում մշակույթի կենտրոն ստեղծելու նպատակով Արփի բնակավայրի նախկին ճաշարանի շենքի մի հատվածի վերանորոգում	4,500.0	Համայնքային բյուջե
19	Արենի համայքնի Արենի բնակավայրում մանկապարտեզի կառուցում	200,000.0	Համայնքային բյուջե

20	Ռինդի մանկապարտեզի վերակառուցում	129,190.0	պետ բյուջե , վարկային
21	Եղեգիս համայնքի Շատին, Թառաթումբ,Աղնջաձոր, Արտաբույնք բնակավայրերի փողոցային լուսավորության իրականացում	105,000.0	Համայնքային բյուջե
22	Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում մանկապարտեզի կառուցում	100,000.0	Համայնքային բյուջե
23	Մալիշկա համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագծի մշակում	500.0	Համայնքային բյուջե
24	Մալիշկա համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում	52,143.0	Համայնքային բյուջե
		1,297,823.0	

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

քաղաքաշինության ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Քաղաքաշինություն	***2007823.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	652698.0
սեփական միջոցներ	*130550.0*
վարկային միջոցներ	*522148.0*
Համայնքային բյուջե	1355125.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

9.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

9.1 Տարածքային կառավարում

Տարածքային կառավարման բաղադրիչի նպատակն է բարելավել պետական կառավարումը մարզում՝ ապահովելով հետևյալ արդյունքները.

Մարզպետարանի աշխատակազմի աշխատեղերի կահավորում և տեխնիկական հագեցում, մարզպետարանի տեղեկատվական և կառուցվածքային կառավարչական համակարգերի բարելավում, մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների իրավական փոխհարաբերությունների բարելավում:

Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով, մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

Տարածքային կառավարման հիմնական գերակայություններից մեկը 2019թ. համար հանդիսանում է մարզային և տեղական իշխանությունների փոխհարաբերությունների կարգավորումը, որը հնարավորություն կտա մարզպետարանին իրականացնել իրավական և մասնագիտական վերահսկողություն ինքնակառավարման մարմինների, համայնքների ղեկավարների, ինչպես նաև ավագանիների կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ: Անհրաժեշտ է նաև միջոցներ ձեռնարկել մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանց ստեղծելու ուղղությամբ, որը կլինի արագ, հասանելի և կբարձրացնի համայնքների իրազեկությունը, ինչպես նաև հիմք կհանդիսանա հետագայում էլեկտրոնային խորհրդակցությունների անցկացման համար:

9.2 Տեղական ինքնակառավարումը և ապակենտրոնացում

Համայնքային մակարդակում բարելավելու համար անհրաժեշտ է զարգացնել համայնքային ծառայության համակարգը, ստեղծել միջհամայնքային միավորումներ և խորացնել առկա համագործակցության մակարդակը համայնքների միջև, բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, հասարակության իրազեկության աստիճանը, ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

2019թ-ի ՄԶՌ ամենակարևոր խնդիրներից մեկը ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումն է և տեղական եկամուտների հավաքագրման աճը պլանավորված մակարդակին հասնելու համար:

Քաղաքաշինության, հողաշինարարության և հողօգտագործման բնագավառներում անհրաժեշտ է ավարտին հասցնել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի փոխանցումը համայնքներին, համայնքային նշանակության հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, ինչպես նաև գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը :

Համայնքային ծառայության համակարգի սահուն ներդրումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ համայնքային ծառայողների, համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստում, համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալները մշտապես հավաքագրում և մուտքագրում միասնական հանրապետական շտեմարանում, համայնքային ծառայողների վարձատրման միասնական համակարգի ներդրում, համայնքի ղեկավարի

աշխատակազմին ապահովելու համապատասխան սարքավորումներով, համակարգչային ծրագրերի տեղադրելուն և այլն:

ՀՀ Վայոց ձորի մարզի զարգացման

տարածքային կառավարման ոլորտի 2019թ. գործունեության ծրագիր

Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներ	***436500.0***
որից՝	
ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	0.0
սեփական միջոցներ	*0.0*
վարկային միջոցներ	*0.0*
Համայնքային բյուջե	436500.0
Մասնավոր ներդրողներ	0.0
Միջազգային և դոնոր կազմակերպություններ	0.0

Համայնքային զարգացման ծրագրեր - Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2018թ.ին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա, որը կպահանջի վերապատրաստման դասընթացներ, որոնց պետք է մասնակցեն ՏԻՄ-երի համապատասխան ծառայողները: Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները: Այս ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանան սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

9.3 Քաղաքացիական հասարակություն

2019թ ընթացքում տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով նախատեսվում է իրականցնել հետևյալ միջոցառումները.

1) 2019թ ընթացքում համագործակցված եւ նպատակային աշխատանք իրականացնել մարզային եւ հանրապետական ՀԼՄ-ների, մարզի տարածքում գործող հասարակական

կազմակերպություններհետ՝մարզպետարանի գործունեության հրապարակայնության եւ թափանցիկության ապահովման նպատակով:

2) մարզի տարածքում գործող ՀԼՄ-ների միջոցով պարբերաբար ներկայացնել մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

3) Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ <<դեմ առ դեմ>> սկզբունքով մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

4). Անհրաժեշտության դեպքում մարզպետարանի ղեկավարների մասնակցությամբ եւ մարզի հեռուստաընկերությունների միջոցով կազմակերպել ուղիղ եթերներ, հանրությունը հնարավորություն ընձեռնելով իրենց հուզող հարցերը ուղիղ կապով իրավասու անձին ուղղելու եւ պատասխանը անմիջապես լսելու համար:

5) Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պետք է պատրաստվեն հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և դրանք առաքվեն բոլոր համայնքներին շրջաբերականների, ինտերնետային կայք էջի, մարզում գործող ՀԼՄ-ների միջոցով:

6) Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրված կլոր սեղաններին, մամլո ասուլիսներին, տարբեր թեմաների շուրջ կազմակերպված քննարկումներին ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

7) 2019թ ընթացքում պարբերաբար իրականացնել մարզպետարանի ինտերնետային

կայք էջի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով ամիսը 2 անգամ կայքում տեղադրել մարզպետի որոշումներն ու կարգադրությաունները: Գրեթե ամեն օր թարմացնել կայքի նորություններ բաժինը, առանձին բաժիններում տեղադրել մարզային բնույթի տարբեր խնդիրներին վերաբերող տեղեկատվություն:

2019թ ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Ստեղծել համայնքների պաշտոնական ինտերնետային էջեր:

2) Փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպելու համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

3) Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

4) 2019թ ընթացքում խիստ ուշադրություն դարձնել համայնքապետարաններում և

համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում

տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, եւ հետևողական լինել,

որպեսզի այդ տախտակների վրա պարբերաբար տեղադրվեն համայնքների ղեկավարների եւ ավագանիների որոշումներ,այլ կարևոր բնույթի տեղեկատվություն:

4) 2019թ ընթացքում հրապարակել ՏԻՄ մարմինների եւ ավագանու տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:

5) Տարվա ընթացքում ըստ անհրաժեշտության հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

6) 2019 թվականին անհրաժեշտությունից ելնելով հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

10. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԶՌ համար կարևորվում է 2019 թվականին իրականացվելիք միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար: Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով հաստատվել է մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կազմը, որտեղ ընդգրկվել են մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խմբի ղեկավարը Վայոց ձորի մարզպետի տեղակալն է: ՄԳ համակարգը կվերահսկի ՏԱՊ-ի կատարումը և կամփոփի 2019 թվականի գործունեության արդյունքները:

ՄԶԾ մոնիտորինգի համակարգը ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները կպատրաստվեն մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

Միջանկյալ հաշվետվությունը կներառի տրամաբանական հենքի հիման վրա կատարված քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն կմշակվի 2019 թվականի առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը կպատրաստվի 2019 թվականի հուլիս ամսին:

Տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները, դրանց գծով կատարված ծախսերը, արդյունքները,

1) Հաջորդ տարվա հիմնախնիդրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի ՄԳ արդյունքներն ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները: Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կկազմակերպվի մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար:

Սեմինար-խորհրդակցությունը կդիտվի նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար կհետևի Վայոց ձորի մարզի խորհուրդը և մարզային զարգացման հանձնաժողովը: